ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ **ՎԻՎ/143/2024**

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «04» հուլիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Հանձնաժողովի Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից «Հետք» լրատվամիջոցի՝ «Գազը՝ համայնքապետի եղբոր, ճանապարհների վերանորոգումը՝ եղբոր աներորդու ընկերություններից» վերտառությամբ[1] հրապարակման մեջ ներկայացված տեղեկատվությամբ վեր հանված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման հիմք հանդիսացած նյութերը, պարզել է.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավար Սևակ Սասունի Միքայելյանի հետ փոխկապակցված անձ Մեխակ Միքայելյանի բաժնեմասնակցությամբ «Լարգո-Վինչ» ՍՊԸ-ի հետ իրականացված գնման գործընթացի արդյունքում 2024 թվականի հունվարի 30-ին թիվ ԷԱՃԱՊՁԲ ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/03 պայմանագրի կնքմամբ Սևակ Սասունի Միքայելյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն (անգործություն), որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր

[1] http://surl.li/tibyu

հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության» մասին օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով, այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության» մասին օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավար Սևակ Սասունի Միքայելյանի նկատմամբ հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ:
2. Սահմանված կարգով ապահովել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը:
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում հրապարակել Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ